

ՈՏԼԱՀԱՐԵԼՈՎ ՊԱՐԿԵՇՏՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Posted on July 23, 2018 by Keghart



Նոր Հայաստան,
Նոր Հայրապետ /
Nor Hayastan, nor
Hayrapet

@Nor.Hayrapet

Category: [Opinions](#)



ՊԱՅՔԱՐ-ի խմբագրութեան,



Ունևհարելոյ պարկեշտութեան բոլոր սահմանները, ՌԱԿ-ը եւ անոր թղթային ու էլեկտրոնային մամուլը վերջին օրերուն սկսած են կեանքիս մէջ չլսած ու չկարդացած ստոր արշաւ մը Գարեգին Բ.ի գահընկեցութիւնը պահանջողներուն, այդ թիւին` իմ հասցէին: Կը բաւէ յիշատակել ՌԱԿ-ի անունէն 21 յուլիս 2018 թուական կրող յայտարարութեան այս հատուածը.

- Այս շարժումի պարագլուխներուն իսկ խոստովանութեամբ, այս նախաձեռնութիւնները կը թելադրուին, կը ղեկավարուին եւ կը ֆինանսաւորուին օտար կառոյցներու կողմէ...

ՊԱՅՔԱՐ-ի խմբագրութեան,



Ունևհարելոյ պարկեշտութեան բոլոր սահմանները, ՌԱԿ-ը եւ անոր թղթային ու էլեկտրոնային մամուլը վերջին օրերուն սկսած են կեանքիս մէջ չլսած ու չկարդացած ստոր արշաւ մը Գարեգին Բ.ի գահընկեցութիւնը պահանջողներուն, այդ թիւին` իմ հասցէին: Կը բաւէ յիշատակել ՌԱԿ-ի անունէն 21 յուլիս 2018 թուական կրող յայտարարութեան այս հատուածը.

- Այս շարժումի պարագլուխներուն իսկ խոստովանութեամբ, այս նախաձեռնութիւնները կը թելադրուին, կը ղեկավարուին եւ կը ֆինանսաւորուին օտար կառոյցներու կողմէ...

Այդ **շարժումի** պարագլուխներէն մէկն ըլլալով, ի լուր ձեզի եւ աշխարհի կը յայտարարեմ, թէ նման հաստատումը ամբողջովին մտացածին է, **ստորագոյն յերիւրանք**, եւ ցոյց կու տայ զայն մոգոնողներուն անբարոյականութեան մակարդակը (եթէ քանի մը կտոր եղած ու զիրար յօշոտող ՌԱԿ-ի թեւերուն համար դեռ կարելի է խօսիլ բարոյականութեան մակարդակի մասին): ՌԱԿ-ի պատմութիւնը լեցուն է օտար կառոյցներու թելադրանքով, ղեկավարումով ու ֆինանսաւորումով բազմաթիւ դրուագներով, արձանագրուած` պետական գաղտնի փաստաթուղթերու եւ այլ նիւթերու մէջ, որոնցմէ ոմանք աստիճանաբար կը ներկայացնեն աշխարհասփիւռ հայութեան, որպէսզի բոլորն ալ գիտնան թէ ով ով է, ինչը` ինչ: Նաեւ` ինծի կը վերապահեմ Հ. Հ.ի դատարաններուն մէջ արժանապատուութիւնս պաշտպանելու եւ սուտեր ու յերիւրանքներ տարածողները պատասխանատուութեան կանչելու իրաւունքը:

Նկատի ունենալով ՌԱԿ-ի եւ անոր խօսափողներուն այս` մեղմագոյն արտայայտութեամբ` անվայել ընթացքը, կը դադրեցնեմ ամէն աշխատակցութիւն ՌԱԿ-ի մամուլին, նաեւ` ամէն յարաբերութիւն ՌԱԿ կոչեցեալ գարշահոտած կառոյցին ու անոր անդամներուն հետ:

Առանց որեւէ յարգանքի՝
Գեորգ Եազըճեան
Երեւան, 23 յուլիս 2018

